

ՀՅԱԿԱԿԱՆ ՍՍՈ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՍՏՂԵՐԻ ԷՎՈԼՈՒՑԻԱՆ  
ԵՎ

ԱՍՏՐՈՖԻԶԻԿԱՆ

ՀՅԱԿԱԿԱՆ ՍՍՈ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱԿԱԳՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՑՈՒՆ

ԱՍԴԵՐԻ ԷՎՈԼՈՒՑԻԱՆ  
ԵՎ  
ԱՍՏՐՈՖԻԶԻԿԱՆ

3



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1948

## Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Ներկա գրքույկը հանդիսանում է ՍՍՌ Միուրյան Գիտուրյուն-ների Ակադեմիայի՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեռլուցիայի 30-ամյակին նվիրված նստաշրջանում մեր կարդացած զեկուցման վերամշակումը:

Մասնագիտական ապարատին տիրապետող ընթերցողների համար գրքույկի վերջում բերված է երկու հավելված, որոնք բացակայում են բուն տեխնում, բայց որոնք կարենու են բննարկվող խնդիրների համար:

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Երկնային մարմինների, այդ թվում Արեգակի և Երկրի ծագման ու գարգացման բացատրությունը ոչ միայն Աստղագիտության, այլև ամբողջ բնագիտության հիմնական խնդիրներից մեկն է։ Աստղագիտության այն բաժինը, որ քննում է այդ հարցը, կոչվում է կոսմոգոնիա։ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում կոսմոգոնիկ հետազոտությունները հանդում էին, գլխավորապես, այսպես կոչված կոսմոգոնիկ հիպոթեզների կառուցմանը։ Սովորաբար, յուրաքանչյուր կոսմոգոնիկ հիպոթեզ ձգտում էր բացատրել տիեզերքի այն մասի ժամանակակից վիճակի ծագումը, որը հայտնի էր հիպոթեզի հանդես գալու պահին։ Օրինակ՝ արեգակնային համակարգության ժամանակակից վիճակը պարզվելուց հետո, Լազլասը դրեց այդ վիճակի ծագման հարցը։ Մոտիկ անցյալում Զինսն արգեն դրեց ոչ միայն արեգակնային համակարգության, այլև աստղային համակարգության (Գալակտիկայի) ծագման հարցը, որի (Գալակտիկայի) անդամներից մեկն էլ Արեգակն է։ Նույնը կարելի է ասել կոսմոգոնիկ բազմաթիվ այլ հիպոթեզների մասին։ Սակայն, հիպոթեզների հեղինակները հանդիպում էին հետևյալ դժվարությանը՝ հայտնի էր միայն մեկ մոլորակային համակարգություն։ Ուսումնասիրված չէին մոլորակային ուրիշ համակարգություններ, որոնք գտնվելով գարգացման այլ փուլերում, կարող էին պատկերացնել տալ մեր մոլորակային համակարգության անցյալ կամ ապագա հնարավոր փուլերի մասին։ Ճիշտ է, Զինսը՝ մեր աստղային համակարգության հարցը դնելիս գիտեր նաև աստղային այլ համակարգությունների մասին, բայց նա ամբողջովին տարված էր այն տարօդինակ գաղափարով, թե Էլլիպտիկ միգամածությունները և սպիրալների կորիզները կազմված են ոչ թե աստղերից, այլ փոշուց ու գազից։ Այդ նյութից, նրա կարծիքով, առաջանում են աստղերը։ Սակայն, ինչպես հայտնի է, պարզվեց, որ այդ գոյացումները կազմված են աստղերից։ Զինսը ճիշտ պատկերացնում ուներ միայն մեր աստղային համակարգության կառուցվածքի մասին, այն էլ այդ համակարգության Արեգակի շուրջը գտնվող սահմանափակ ծավալով միայն։

Երկնային մարմինների քննարկվող համակարգությունների անցյալ հնարավոր վիճակների մասին չունենալով դիտողական բնույթի էական տվյալներ, կոսմոգոնիկ հիպոթեզների հեղինակ-

ները ղեկավարվում էին համակարգության սկզբնական վիճակի վերաբերյալ ունեցած որևէ կանխակալ պատկերացումով:

Շատ հաճախ ընդունվում էր, որ սկզբնական վիճակը եղել է նոսր միտամածություն:

Բնական է, որ հետագոտության այդ ուղին բերում էր սպեկուլարիզմի, հաճախ շատ ապարդյուն, կառուցումների: Կոսմոգոնիկ հիպոթեզներից միայն քչերը (ես նկատի ունեմ հենց կապահան և ժի՞նսի հիպոթեզները) դրական որոշ դեր կատարեցին Աստղագիտության պատմության մեջ:

Սակայն, գիտության այդ բնագավառում վերջին երեսուն սարքա ընթացքում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ: Ժամանակակից Աստրոֆիզիկայի գարգացման շնորհիվ ամենատարբեր տիպի և գարգացման տարբեր փոփերում գտնվող աստղերի ու աստղային սիստեմների մասին: Ուսումնասիրված են աստղերի գիգիկական հատկություններն այդ վիճակներում: Ցույց է տրված, որ աստղերի տարբեր վիճակների ամբողջությունը բնության մեջ գարգանալիորեն բազմացան է: Աստղերի գարգացման որոշ, ընթացքի մեծ արագությամբ աշքի ընկնող, այսինքն թորիչքաձև փուլերը, ինչպես օրինակ, Նորերի ու Գերնորերի բռնկումները, անմիջականորեն դիտվում են նոնթարկվում են մանրակրկիտ ուսումնասիրության: Ժամանակակից ստատիստիկ-մեխանիկական մեթոդների կիրառումը մեծ թվով անդամներից կազմված սիստեմների նկատմամբ, հանգեցրել է շատ էական եզրակացությունների՝ այդ սիստեմներում տեղի ունեցող դրավոր փոփոխությունների բնույթի մասին:

Այս բոլորի հետևանքով կոսմոգոնիկ պրոբլեմի դրվածքը պետք է բոլորովին փոխվեր և փոխվեց: Խոսք պետք է լինի ոչ թե հիպոթետիկ սկզբնական վիճակից ելնելով որևէ ինդուիդուալ սիստեմի արդի վիճակը հետևցնելու մասին, այլ արդեն պետք է խոսել երկնային մարմինների և նրանց սիստեմների գարգացման ընդհանուր օրինաշափություններին հանգելու մասին: Մասնավորապես Արեգակի և արեգակնային համակարգության ծագումը պետք է ըմբռնել աստղերի գարգացման ընդհանուր տեսության շրջանակներում:

Այդ շի նշանակում, թե կոսմոգոնիայի խնդիրն այժմ ավելի հեշտ է, քան առաջ: Ընդհակառակը, աստղերի մասին գիտողական ովյալների առատությունն առաջ քաշեց կոսմոգոնիայում մի ամ-

բողջ շարք նոր և ընդումին շափազանց խորը հարցեր, որոնց մասին մինչ այդ մենք պատկերացում էլ չունեինք: Բայց դրա հետ միասին հասրավորություն՝ ստեղծվեց ձեռնամուկն լինել պրոբլեմի լուծմանը՝ սկսելով՝ ավելի պարզ այն խնդրի քննարկումից, թե աստղերի դիտվող վիճակներից որո՞նք և ի՞նչ ձեռվ են գենետիկորեն կապված իրար հետ: Ըստանալով այդ ուղիով, փաստական նյութը մանրակրկիտ ուսումնամիրելով և անհրաժեշտ պահերին հարմապատասխան հիպոթեզներ ու տեսովիյուններ վիրառելով (չի կարելի ժխտել հիպոթեզների օգտագետությունն այնուղիւ, որտեղ նրանք իրոք անհրաժեշտ են), կարելի կլինի լուծել ամբողջ կոսմոգոնիկ պրոբլեմը:

Սակայն, մինչև հիմա էլ որոշ հեղինակներ շարունակում են ընթանալ արդեն անակետքացածք, հին կոսմոգոնիկ հիպոթեզների տիպի սպեկուլատիվ կառուցումների ուղիով, մի կողմ թողնելով աստղերի ֆիզիկական վիճակների մասին ժամանակակից գիտելիքների ամբողջ զինանոցը, արհամարհելով աստղային սիստեմների ստատիստիկ մեխանիկայի և բնդհանրապես տեսական ֆիզիկայի եզրակացությունները և դրանով իսկ սիսալներ կուտակելով սիսալների վրա: Ներկա զեկուցման մեջ մենք հասրավոր շամարեցինք կանք առնել այդ ապարդյուն կառուցումների վրա:

Կոսմոգոնիկ նշանակություն ունեցող այն փաստերը և աստրոֆիզիկական տվյալները, որ մենք բերում ենք ստորև, զգալի շափով ստացվել են սովետական աստրոֆիզիկոսների աշխատանքների շնորհիվ: Զնայած մեր դիտողական բազայի որոշ թուլությանը, սովետական աստրոֆիզիկոսները ճիշտ ուղղովիյուն են տալիս իրենց աշխատառություններին՝ զբաղվելով աստղերի զարգացման պրոբլեմի հետ կապված աստղային ֆիզիկայի արմատական, հիմնական պրոբլեմների լուծման հարցերով և այդ ասպարեզում համառամ են հաջողության: Ուստի տեղին է նշել դրանք այսուղի՝ Սովետական Գիտության 30 տարվա հանրագումարները տալիս:

Նախ մենք կբերենք տվյալներ առանձին աստղերի մասին, իսկ հետո կանցնենք աստղային սիստեմներին:

ԱՌԱՆՁԻՆ ԱՍՏՋԵՐԻ: Յուրաքանչյուր աստղի վիճակ բնութագրում է երեք հիմնական մեծությունների՝ նրա մասսայի, շառավղի և լուսատվության, այսինքն նրա կողմից արձակվող ճառագայթման հզորության, արժեքներով: Սակայն այդ մեծությունների ո՞չ բոլոր երկարակայելի կոմբինացիաներն են հանդիպում բնության

մեջ: Որպեսզի այդ պարզ լինի, ուշադրովթյուն դարձնենք դրանցից երկուսի, ասենք՝ շառավղի և լուսատվության վրա: Լուսատվության՝ շառավղից ունեցած կախումը պատկերող դիագրամի վրա յուրաքանչյուր աստղ կներկացացվի որպես մի կետ: Պարզվում է, որ մեր Գալակտիկան կազմող աստղերի ամբողջությունը պատկերող կետերը այդ դիագրամի վրա համակենտրոնանում են մի քանի որոշակի գծերի շուրջը: Ըստ մեզ հայտնի տվյալների՝ աստղերի ճնշող մեծամասնությունը (տասնյակ միլիարդներ մեր Գալակտիկայում) շառավիղ-լուսատվության դիագրամի վրա համակենտրոնացած է մի այդպիսի գծի շուրջը: Այդ աստղերը կրում են զինավոր հաջորդականուրյան աստղեր անունը: Դիագրամի այլ տիրույթում գտնվող այսպես կոչված սպիտակ թզուկներն ըստ քանակի գրավում են երկրորդ տեղը: Սպիտակ թզուկների բացարձակ թիվը պետք է արտահայտվի հարցուր միլիոններով: Ի դեպ, նրանց այդ բազմաքանակությունն առաջին անգամ սահմանել են սովորական աստրոֆիզիկոսները:<sup>1</sup> Ըստ քանակի երրորդ տեղը գրավում է հնկա աստղերի խումբը կամ հաջորդականությունը: Գալակտիկայում նրանց թիվը բավարույն դեպքում մի քանի միլիոն է: Մի նոր ենթաթղուկների հաջորդականության մասին ցուցումներ կան պրոֆ. Պարենագոյի մոտ:<sup>2</sup> Բայց նրանց թվի մասին մենք առայժմ տվյալներ չունենք և դժվար է դատել այդ հաջորդականության էվլուցիոն նշանակության մասին:

Աստղի վիճակի փոփոխության ժամանակ նրա մասսայի, շառավղի և լուսատվության արժեքներն ել ընդհանրապես պետք է փոխվեն: Հետեւաբար, իր զարգացման ժամանակ աստղը պետք է տեղաշարժվի մեր դիագրամի վրա: Հարցն այն է, թե այդ տեղաշարժման հնարավոր ինչպիսի ճանապարհներ կան:

Շառավիղ-լուսատվություն դիագրամի վրա դիտվող տարբեր հաջորդականությունների սոսկ քննարկումն արդեն թույլ է տալիս հետաքրքիր եղբակացություններ անել: Այսպես՝ պարզվում է, որ զարգացման երեակայելի քոլոր ուղիներից միայն մի քանիսը չեն հակասում այդ դիագրամին: Մնացած ուղիները հակասում են դիագրամին և պետք է դեն գցվեն:

Ակնհայտ է, որ աստղերի ճնշող մեծամասնությունը համարյա միշտ գտնվում է գլխամոր հաջորդականության վրա: Այդ պատճառով համարյա միշտ նրանց փոփոխությունները պետք է արտահայտվեն տեղաշարժումով՝ գլխամոր հաջորդականության երկայնությամբ: Սակայն, գլխամոր հաջորդականության տարբեր

Կետերում գտնվող աստղերն ունեն տարբեր մասսաներ։ Ուստի, աստղի՝ այդ հաջորդականության երկայնությամբ կատարվող որևէ զգալի տեղափոխությունը պետք է ուղեկցվի նրա մասսայի զգալի փոփոխությամբ։

**Այստեղից ստացվում է հետևյալ եղբակացությունը։**

Դիմավոր հաջորդականության աստղը, մնալով այդ հաջորդականության մեջ, կամ համարյա չի փոխում իր վիճակը, կամ փոխում է իր մասսան։

Այստեղից պարզ է, թե ի՞նչպիսի հիմնական նշանակություն է ստանում աստղի մասսայի փոփոխության պրոբլեմը։ Իսկ որո՞նք են աստղերի մասսաների փոփոխության հնարավոր պատճառներն ու եղանակները։

Պետք է ասել, որ աստղերի մասսաների աճման ոչ մի հնարավոր եղանակ մինչև այժմ չի դիտվել և տեսականորեն չի առաջադրվել։ Միշատդային նյութի հաշվին կատարվող աճը արհամարհելիորեն աննշան է։ Ինչ վերաբերում է մասսայի նվազմանը, ապա նման մեխանիզմ առաջադրվել է էղինգոտոնի և ջինսի կողմից։ Նրա էությունը մասսայի նվազումն է ճառագայթման հաշվին։ Աստղային սիստեմների ստատիստիկ մեխանիկայից բխող տվյալները, ինչպես մենք ցույց ենք տվել մի այլ տեղում, միանգամայն միարժեք կերպով հանգեցնում են աստղային սիստեմների գոյության այնպիսի տեղությունների, որոնց ընթացքում ճառագայթման վրա ծախսված մասսան արհամարհելի է՝ աստղի լրիվ մասսայի համեմատությամբ։

Սակայն, աստղերից նյութի անմիջական արձակման վերաբերյալ մեզ մոտ՝ ՍՍՌՄ-ում, վերջին տարիների ընթացքում կատարված հետախուզումները<sup>3</sup> թույլ տվին պարզելու, որ աստղային մասսայի անմիջական նվազումը շատ ավելի մեծ է, քան ճառագայթման հետևանքով տեղի ունեցող նվազումը և համենայն դեպքում դեպքերում կարող է ունենալ և ունի կարևոր էվոլուցիոն նշանակություն։

Սուրեն մենք կշոշափենք մասսայի այդպիսի անմիջական արձակման մի քանի կարևոր օրինակներ, որի ժամանակ աստղի մասսան կարող է զգալիորեն փոքրանալ։ Սակայն այստեղ անհրաժեշտ է նշել, որ նյութի ինտենսիվ դուրս նետման դիտված դեպքերի մեծամասնությունը վերաբերում է գլխավորապես բարձր շերմաստիճան ունեցող աստղերին։

Ինչ վերաբերում է հսկաների ճյուղին, ապա նրա տարբեր

վիճակներին համապատասխանում են միևնույն կարգի մասսաներ: Ուստի այդ ճյուղի երկայնությամբ հնարավոր տեղափոխումները կարող են կատարվել առանց աստղի մասսայի էական փոփոխության:

Սպիտակ թզուկների մոտ՝ հայտնի օբեկտների մեծամասնության համար մասսայի արժեքը մենք չգիտենք: Այս կապակցությամբ առայժմ շատ գժվար է խոսել այն մասին, թե մասսայի ի՞նչպիսի փոփոխությունների ժամանակ հնարավոր է սպիտակ թզուկների առաջխաղացումն իրենց ճյուղի երկայնությամբ:

Վերջապես, մենք պետք է հաշվի առնենք նաև թոփչքաձև անցումների հնարավորությունը՝ մեկ եյուղից դեպի մյուսը:

Ընդումին եթե վերցնենք մասսայի փոփոխությամբ ուղեկցվող թոփչքաձև անցումները, ապա նրանք կարող են լինել ամենաբազմազան քնույթի և ուղղության (Հսկաների ճյուղ—Հսկաների ճյուղ՝ ուղիղ կետում, Հսկաների ճյուղ—գլխավոր հաջորդականություն, սպիտակ թզուկ—գլխավոր հաջորդականություն, սպիտակ թզուկ—Հսկա և այլն):

Շառավիղ-լուսատվություն դիագրամին շեն հակասում նաև առանց մասսայի էական փոփոխության կատարվող թոփչքները, օրինակ, գլխավոր հաջորդականությունից դեպի սպիտակ թզուկները և հետ, ենթադրաբար, սպիտակ թզուկներից դեպի հսկաները կամ հետ:

Մենք տեսնում ենք, որ նշված դիագրամի պարզ քննարկումը ցույց է տալիս արդեն, թե նրա վրա էվոլուցիայի ի՞նչպիսի ուղիներ են հակասում իրեն և ի՞նչպիսի ուղիներ չեն հակասում:

Կարող են հարցնել, թե հնարավո՞ր չէ արդյոք, նաև աստիճանական, էվոլուցիոն տեղափոխում նշված ճյուղերի միջև։ Պատասխանում ենք՝ հնարավոր է, սակայն աստղերի դիտվող փոքր հաճախականությունը ճյուղերի միջև ցույց է տալիս, որ կամ այդ աեղի է ունենում միայն աստղերի փոքր տոկոսի հետ, կամ ճյուղերի միջև գտնվելու ժամանակամիջոցը շատ կարճ է, այսինքն՝ անցումն այնուամենայնիվ կատարվում է թոփչքաձև:

Քննարկվող դիագրամով թուղարքելի գարգացման և էվոլուցիայի ուղիներից իսկական ուղիներն ընտրելու, այսինքն՝ աստղի վիճակի բոլոր ենթադրելի փոփոխությունների միջև հետագա ընտրություն կատարելու համար, մենք պետք է դիմենք, եթե կարելի է այսպես արտահայտվել, փոքր աստղային սիստեմների, այ-

սինքն՝ կրկնակի աստղերի և աստղակույտերի ուսումնասիրության հետ կապված մի շաբք փաստերին:

ԿՐԿՆԱԿԻ ԱՍՏՂԵՐԸ իրենց կյանքի ընթացքում մեր Գալակտիկայի մյուս աստղերին մոտենում են և հեռանում: Այդպիսի մերձեցումների ժամանակ սիստեմները խանգարվում են և նրանց օրբիտների էլեմենտները՝ փոփոխվում: Ժամանակի ընթացքում պետք է հաստատվի օրբիտների էլեմենտների որոշ հավասարակշիռ բաշխում: Կրկնակի աստղերի էքսցենտրիտետներին վերաբերող տվյալները վերլուծելով՝ Զինսու<sup>4</sup> հեկավ այն եզրակացության, որ այդպիսի հավասարակշիռ բաշխում արդեն կա: Սակայն քննարկվող հարցի համար ավելի էական բնութանիշներին, այն է՝ օրբիտների մեծ կիսառանցքներին վերաբերող տվյալների հիման վրա գեկուցողը ցույց տվեց,<sup>5</sup> որ Զինսի այդ ենթադրությունը սիսալ է: Պարզվեց, որ աստղույգերի օրբիտների էլեմենտների բաշխումը բոլորովին նման չէ հավասարակշիռ բաշխմանը: Այստեղից եզրակացվեց, որ հավասարակշիռ վիճակի հաստատման համար անհրաժեշտ ժամանակը (ոելակացիայի ժամանակը) դեռ չի լրացել: Այսպիսով, հաջողվեց հաշվել, որ աստղագոյների հնշող մնձամասնուրյան հասակը չի գերազանցում մի քանի միլիմետր տարուց:

Սա առաջին, չափազանց կարևոր կոսմոգոնիկ եզրակացությունն է ժամանակակից Աստրոֆիզիկայից:

Սակայն, զույգի մերձեցումը երրորդ աստղի հետ որոշ դեպքերում կարող է դառնալ նաև զույգի քայլայման պատճառ: Տեսականորեն հարաբեկոր են նաև հակառակ պրոցեսներ — զույգերի առաջցում՝ երեք աստղերի պատճական մերձեցման ժամանակ:

Ստատիստիկ հավասարակշռության ժամանակ թե՛ մեկ և թե՛ մյուս պրոցեսները հավասարապես հաճախ են պատճառում, ունի ունի դիսոցիատիվ հավասարակշռություն: Սակայն, մեր աստղային համակարգության մեջ զույգերի թվի դիտված հարաբերությունը՝ միայնակ աստղերի թվին միլիոնավոր անդամ մեծ է, քան պետք է լիներ դիսոցիատիվ հավասարակշռության ժամանակ:<sup>6</sup> Քանի որ զույգերի առաջցումն և քայլայման հավանականություններն էապես կախված չեն այդ հավասարակշռության առկայությունից կամ բացակայությունից, ապա այդ նշանակում է, որ աստղային համակարգության մեջ այժմ քայլայման պրոցեսները տեղի են ունենում միլիոնավոր անդամ ավելի հաճախ, քան զույգերի առաջցումն պրոցեսները (տե՛ս Հավելված 1): Միաժամա-

նակ մենք եզրակացնում ենք, որ Գալակտիկայում գոյություն ունեցող աստղագույգերի ամբողջությունը չի կարող լինել պատահական մերձեցումների արդյունք: Յուրաքանչյուր զույգի կոմպոնենտներն ընդիանուր ծագում ունեն:

**Սա երկրորդ, շափազանց կարևոր կոսմոգոնիկ եզրակացությունն է ժամանակակից Աստրոֆիզիկայից:**

**ԲԱՅ ԱՍՏՂԱԿՈՒՅՑՏԵՐ:** Բաց աստղակույտերը սովորաբար կազմված են մի քանի տասնյակ կամ հարյուրյակ աստղերից: Առանձին գեպֆերում աստղակույտի անդամների թիվը համարում է հազարների: Աստղակույտերն այնպիսի սիստեմներ են, որտեղ բոլոր անդամներն իրար հետ կազմված են ձգողականության ուժեցրով: Տիպիկ բաց աստղակույտեր են Պլեադ և Հիադ աստղակույտերը: Աստղակույտերից յուրաքանչյուրը որպես ամբողջություն պտտվում է Գալակտիկայի կենտրոնի շուրջը: Սակայն, բացի դրանից, աստղակույտի յուրաքանչյուր աստղը կատարում է ըրոշ շարժում աստղակույտի ներսում՝ նրա մնացած աստղերի համատեղ ազդեցության տակ: Աստղային դինամիկայում ասկացուցվում է, որ առանձին աստղերի՝ այդ ժամանակ տեղի ունեցող պատահական փոխադարձ սերտ մերձեցումների հետևանքով, աստղերի որոշ մասը կատանա աստղակույտից հեռանալու համար բավարար կինետիկ էներգիա: Այս եղանակով աստղակույտը ժամանակի ընթացքում կարող է լիովին քայլային: Հաշվումները ցույց են տալիս, որ այդպիսի քայլայման համար պահանջվող ժամանակը հավասար է մի քանի միլիարդ տարվա, իսկ աստղերով ազքատ աստղակույտերի համար՝ մի քանի հարյուր միլիոն տարվա: Ընդամենք թզումները, այսինքն՝ փոքր մասսայով աստղերն ավելի արագ են հեռանում աստղակույտից, որի հետևանքով իր գոյության առաջին փուլերում աստղակույտը դառնում է թզուկ աստղերով համեմատաբար աղքատ:

**Որոշ բաց աստղակույտեր, օրինակ՝ Ն և Ի Փերսեյի, Մեսյ 11, թզումներով համեմատաբար հարուստ են: Կարելի է ենթադրել, որ այդպիսի սիստեմները մյուսներից ավելի երիտասարդ են:**

**Այդ ու համանման աստղակույտերի առանձնահատկություններից մեկն էլ նրանց Բ և Օ տիպի, այսինքն՝ բարձր լուսատվություն ունեցող տաք աստղերով հարուստ լինելն է: Ի միջի այլոց, նրանց մեջ կան նաև պայծառ գծերով բարձր չերմաստիճան ունեցող աստղեր և Պ Կարապի տիպի աստղեր: Դրանք բոլորն ել աշքի են ընկնում նրանով, որ այդ աստղերից կատարվում է նյութի ան-**

ընդհատ արտահոսում: Այդ երեսուցիս յուրաքանչյուր աստղում չի կարող շարունակվել, համենայն դեպս, մի քանի հարյուր հազար տարուց ավելի, այլապես ասողի ամբողջ նյութը կսպառվի: Ուստի այնպիսի լիճակը, երբ աստղակույտում անընդհատ կան մեկ կամ մի քանի թ Կարապի կամ Յե տիպի աստղեր, չի կարող շարունակվել մի քանի տասնյակ միլիոն տարուց ավելի: Իսկ այդ հաստատում է նման աստղակույտերի երիտասարդությունը: Այդպիսի աստղակույտերում մեծ թվով բարձր լուսատլություն և բարձր ջերմաստիճան ունեցող աստղերի առկայությունն էլ իր հերթին այդ աստղերի երիտասարդությունն է ապացուցում:

**ԱՍՏՂԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՅԻՆՆԵՐ:** Այս հանգամանքի օգտին խոսող է՝ ավելի զորեղ ապացուց է հանդիսանում բարձր ջերմաստիճան ունեցող աստղերի ցրված խմբերի առկայությունը որոշ աստղակույտերի, օրինակ՝ և և Պերսեյի կրկնակի աստղակույտի, NGC 6231 աստղակույտի և ուրիշների, շուրջը: Իրար հետ թույլ կապված անդամների ասոցիացիաներ հանդիսացող այդ ցըրված խմբերն անկայուն են և դինամիկ պատճառներով պետք է քայլային մի քանի տասնյակ միլիոն տարվա ընթացքում: Ես կառաջարկեի նրանց անվանել աստղային ասոցիացիաներ: NGC 6231 աստղակույտի շուրջն այդպիսի ասոցիացիայում բարձր լուսատվություն ունեցող ընդամենը քսան աստղերի մեջ կան, օրինակ, Վոլֆ-Ռիայի տիպի երկու աստղ և թ Կարապի տիպի երկու աստղ: Կողիրմիք լայնատարած ֆոտոսֆերաների տեսության համաձայն, այդ տիպի աստղերը ամեն տարի արձակում են Արեգակի մասսայի մոտ մեկ հարյուր հազարերորդական մասի շափ մասսա: Ուստի մի աստղի համար այդպիսի արտահոսումը չի կարող անփոփոխ շարունակվել ավելի, քան մեկ կամ երկու միլիոն տարի: Այստեղից դժվար չէ տեսնել, որ անկամած ընդհանուր ծագում ունեցող աստղերի այդ ասոցիացիայի նման վիճակը կարող է ընդհանրապես տեսել ամենաշատը տասնյակ միլիոնի կարգի տարի:

Հետևապես ուշագրով է և և Պերսեյի կրկնակի աստղակույտի շուրջը գտնվող աստղային ասոցիացիան: Այդ աստղակույտում կենտրոն ունեցող  $2^{1/2}$  աստիճան շառավղով շրջանում գտնվում են Յ և Մ տիպերի մի քանի տասնյակ գերհսկաներ: Հնարավոր է, որ այդ ասոցիացիայում քիչ շեն նաև ֆիզիկական ուրիշ տիպերի աստղեր: Ընդունելով այդ սիստեմի հեռավարությունը երկու հազար պարսեկ, նրա տրամագծի համար կստանանք երկու հարյուր պարսեկի կարգի արժեք: Կրկնակի աստղակույտն այդ

ասոցիացիայի կորիզն է կազմում։ Բուն այդ կորիզը կարող է ունենալ կայունության նույնպիսի աստիճան, ինչ որ մյուս բաց աստղակուրտերը, քայլ ասոցիացիամբ իր ամբողջությամբ, անշուշտ, անկայուն է և Գալակտիկայի կենտրոնի խանգարիչ ազդեցության տակ նա պետք է քայլայվի, եթե միայն այդ սիստեմի մասսան չի գնահատվում միլիոնավոր արեգակնային մասսաներով։ Սակայն, նրա այդքան մեծ մասսա ունենալու օգտին ոչ մի վկայություն չկա:

Երիտասարդ աստղային ասոցիացիաների մի այլ, ապշեցուցիչ օրինակ հանդիսանում են Դ Ցովի տիպի փուխտական աստղերի փոմբերը։

Փաստերը ցույց են տալիս, որ այդ տիպի գրեթե բոլոր մեզ հայտնի փոփոխական աստղերը կենտրոնացած են երկնքի երկուերեք որոշակի մասերում, ըստ որում այդ տիպն աշքի է ընկնում պայծառության փոփոխման ծայրահեղ անկանոնություններով և ֆիզիկական որոշակի այլ բնութանիշներով։ Կիրտման շափականց խառորեն արտահայտված այդպիսի տենդենցը ոչ մի կերպ չի կարելի բացատրել նրանց հայտնաբերման պատահականությամբ։ Անկասկած, այստեղ մենք գործ ունենք աստղերի ֆիզիկական ուրոշակի խմբերի անդամների հետ։ Բայց այդ խմբերից յուրաքանչյուրի գծային շափերն այնքան մեծ են, որ աւարածության մեջ ունեցած նրանց մոտիվությունը փոխադարձ ձգողականության ուժերով կապված լինելու միջոցով բացատրելու մասին խոսք անգամ լինել չի կարող։ Գալակտիկայի կենտրոնից եկող մակընթացալին ներգործությունը պետք է որ զատ արագ քայլայի նրանց։ Ավելի շուտ պետք է կարծել, որ այդ խմբերն այժմ արդեն գանդաղորեն ցըլում են։ Օրինակ՝ Զոյի տվյալներով (1945) Դ Ցովի տիպի Դ աստղերից կազմված այդպիսի խմբերից մեկի կենտրոնը գտնվում է երկնքի՝ 142<sup>o</sup> գալակտիկի երկայնություն և —14<sup>o</sup> լայնություն ունեցող, կետում։ Զոյի տվյալները<sup>9</sup> թույլ են տալիս պնդել, որ այդ սիստեմի գծային շափերը հասնում են 10—20 պարսեկի։ Եթե նույնիսկ ենթադրենք, որ այդ սիստեմի անդամների թիվը հազարից ավելի է, ապա նաև աստղային այդ ասոցիացիան, չի կարող երկար պահպանվել ձգողականության ներքին ուժերի ազդեցության տակ։ Աւտի, եթե մենք այժմ այդ աստղերը միատեղ ենք դիտում, ապա այդ նշանակում է, որ նրանք վերջերս են առաջացել և նրանց ցըլումը գեռ նոր է ակնվել։ Աստղային այդ ասոցիացիան չի կարող 100 միլիոն տարուց ավելի հասակ ունենալ։

Այդ ժամկետը փոքր է Գալակտիկայի համակի համեմատությամբ, որը մեր կողմից գնահատվում է մի քանի միլիարդ տարով։ Հետեւաբար, նաև այժմ, մեր դարաշրջանում, շարունակվում է աստղերի առաջացումը Գալակտիկայում։

Սա էլ չափազանց կարևոր եղակացություն է ժամանակակից Աստրոֆիզիկայի տվյալներից։

Տ Ցույի տիպի աստղերի գեպքում մենք արդեն գործ ունենք թղուկների հետ։ Ի դեպ՝ նրանք սերտորեն կապված են գիսաստղաձև փոքր միգամածությունների հետ և սպեկտրներում ցույց են տալիս պայծառ գծեր։ Անկանած է, որ նրանք կումոգոնիայի համար հետագայում էլ կբերեն նոր ու կարևոր տվյալներ։ Տ Ցույի սպեկտրի ստրուկտուրայի մասին Սամֆորդի հենց նոր լույս տեսած հետազոտությունը հաստատում է, որ այդ աստղից կատարվում է նյութի անընդհատ արտահոսում։ Ի միջի այլոց պարզվեց, որ Տ Ցույի տիպի աստղերի գրեթե կեսը վիզուալ կրկնակի են։ Այն դեպքերում, երբ հաջողվում է արբանյակի սպեկտրն ստանալ, պարզվում է, որ այն Ա տիպի թղուկի սպեկտրը՝ պայծառ գծերով։ Քանի որ արբանյակի և գլխավոր աստղի ընդհանուր ծագումն անկանած է (տես վերևում՝ կրկնակի աստղերի մասին), ապա մենք եղակացնում ենք, որ Ա տիպի պայծառ գծերով թղուկ աստղերը նույնքան երիտասարդ են, որքան և Տ Ցույի տիպի աստղերը։

Եթե այստեղ ավելացնենք, որ քննարկվող աստղային ասուցիայի դասավորության շրջանում Ցույի համաստեղության մեջ հայտնաբերված են ուշ տիպերի պայծառ գծերով՝ մոտ 40 թղուկ, գլխավորապես Ա տիպի, ապա պարզ կրտանա, որ նրանց կարելի է վերագրել ընդհանուր ծագում։ Տ Ցույի տիպի փոփոխականների հետ։ Հետեւաբար, այդ աստղերն էլ պետք է շատ երիտասարդ համարել։

Քանի որ Գալակտիկայի աստղերի մեծամասնությունը Ա տիպի թղուկներ են, ապա այդ հարցի հետագա ուսումնասիրությունը հակայական նշանակություն կունենա կոսմոգոնիայի համար։

Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Տ Ցույի տիպի աստղերի ցածր բացարձակ պայծառության շնորհիվ, նրանցից կազմված ասոցիացիաներն առայժմ կարող են հայտնաբերվել տարածության՝ Արեգակից ոչ հեռու ընկած տիրություններում միայն։ Դրան նպաստում է նաև աստղերի փոքր խտությունն արդ ասոցիացիաներում։ Հենց դրանով կարելի է բացատրել, որ մինչև այժմ հայտնի են Տ Ցույի տիպի փոփոխականնե-

րի միայն երկու ասոցիացիա, ընդումին երկուան էլ հարյուր պարաելի կարգի հեռավորությունների վրա։ Ուստի, անկասկած է, որ համանման ասոցիացիաների թիվը Գալակտիկայում առնվազն հազարներով է շափվում։ Եթե ընդունենք, որ նրանց հասակը միշտն հաշվով հարյուր միլիոն տարվա կարգի է, ապա նրանց մեջ հավանաբար կգտնվեն նաև ավելի երիտասարդ ասոցիացիաներ, առենք, տասը միլիոն տարվա կարգի հասակով։ Չէ՞ որ ոչ մի հրաժարական բերդին երկու հարյուր միլիոն տարվա մեջ Գալակտիկայի կյանքում եղել է այնպիսի հատուկ մոմենտ, երբ մեկ անգամից, միաժամանակ, առաջացել են նման ասոցիացիաներ, որից հետո նրանց գոյացումը դադարել է։

Այսպես ուրեմն, կարող ենք ասել, որ թեպետ աստղային դինամիկայի բոլոր տվյալներով Գալակտիկայի հասակը մի քանի միլիարդ տարվա կարգի է, բայց և այնպես բոլոր աստղակույտերի առաջնումը տեղի է ունեցել ո՛չ միաժամանակ և մինչև այժմ էլ շարունակվում է։ Համեմայն գեաս Գալակտիկայում և Մագելլանի Ամպերում կան շատ երիտասարդ աստղակույտեր և աստղային ասոցիացիաներ, որոնք չեն կարող գոյություն ունենալ իրենց արդի տեսքով մի քանի տասնյակ միլիոն տարուց ավելի։ Բաց աստղակույտերի և ասոցիացիաների առաջացման պրոցեսը՝ Գալակտիկայում ներկայումս շարունակվում է։

Մյուս կողմից՝ աստղային ասոցիացիաների և աստղակույտերի առաջացումը չէր կարող տեղի ունենալ առաջներում։ Իրարից անկախ աստղերի մի խմբում միավորվելու ճանապարհով։ Միայնակ աստղերից աստղակույտերի (կամ ասոցիացիաների) այրպիսի մեխանիկական գոյացման անհնարինության ապացույցները նույնպիսի բնույթ ունեն, ինչ կրկնակի աստղերի մասին վերևում մեր բերած փաստարկումը։ Տարբերությունը լոկ այն է, որ այս գեպքում փաստարկներն է՛լ ավելի զորեղ են, քանի որ աստղակույտի քայլայման հավանականության հարաբերությունը՝ աստղերի հանդիպման հետևանքով աստղակույտի առաջացման հավանականությանը, Գալակտիկայում գոյություն ունեցող պայմաններում, արտահայտվում է հարյուրավոր թվանշաններ պարունակող թվով։

Այսպիսով, մենք գալիս ենք հետևյալ եզրակացությանը. աստղային ասոցիացիաները (և որոշ աստղակույտեր) որպես աստղերի սիստեմներ, երիտասարդ են, ինչ որ եղանակով գոյանում են մեր Գալակտիկայում, բայց նրանք չեն գոյանում անցյալով իրարից անկախ աստղերի միավորման ճանապարհով։ Հետևաբար, ասո-

յիացիաներին և աստղակույտերին պատկանող աստղերը համապատասխան ասոցիացիաների և աստղակույտերի գոյացումից առաջ գոյություն չեն ունեցել:

Այստեղից հանգում ենք այն անխոսսափելի եղբակացության, որ բաց աստղակույտերում (ասոցիացիաներում) աստղերը կազմավորվում են այդ աստղակույտերի (ասոցիացիաների) գոյացման պրոցեսում:

Համադրելով այս արդյունքը այն բանի հետ, որ Գալակտիկայում ունենք շատ երիտասարդ աստղային ասոցիացիաներ՝ տարբերակած միլիոն տարվա կարգի հասակով, մենք եղբակացնում ենք, որ այդ ասոցիացիաներում գտնվող աստղերն էլ նույնպիսի հասարաւնեն:

Եթե այդպես է, ապա ուսումնասիրելով այդ աստղային պիտեմներում գտնվող աստղերը, մենք կարող ենք պատկերացում կազմել աստղերի այն վիճակների մասին, որ նրանք ունեցել են իրենց առաջացմանն անմիջապես հաջորդող ժամանակաշրջանում:

Այդ վիճակները բավականաշափ բազմազան են՝ Վոլֆ-Ռայե տիպի, P Կարապի տիպի աստղեր, O և B տիպի պայծառ գծերով և առանց այդ գծերի աստղեր, T Ցովի տիպի փոփոխական թղոփներ, պայծառ գծերով գեղին ու կարմիր թղոփներ:

Շառավիղ-լուսատվություն դիագրամի վրա այդ բոլոր վիճակները պատկերացվում են գլխավոր հաջորդականության կետերով: Ընդամեն նշված երիտասարդ աստղերի սպեկտրներում պայծառ գծերի գոյությունը ցուց է տալիս, որ տեղի ունի նյութի անընդհատ արտահոսում այդ աստղերից: Այդ վկայում է, որ նրանք գեռ չեն գտնվում ստացիոնար վիճակներում: Հնարավոր է, որ այդ աստղերը հետագայում վեր են ածվում գլխավոր հաջորդականության սովորական աստղերի:

Այսպիսով, պետք է ենթադրել, որ նոր կազմավորված աստղերը շառավիղ-լուսատվություն դիագրամն են մտնում գլխավոր հաջորդականության ամբողջ ճակատով և ոչ թե նրա միայն մի ծայրից:

ԲԱՅ ԱՍՏՂԱԿՈՒՅՏԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ: Հարց է առաջ գալիս, թե ինչից և ինչ ձևով է տեղի ունենում աստղային ասոցիացիաների և բաց աստղակույտերի առաջացումը: Ի՞նչպես են ծագում այդ սիստեմների կազմում գտնվող Վոլֆ-Ռայե, P Կարապի կամ T Ցովի տիպերի աստղերը, որոնցից նյութն անընդհատ գուրս է

նետվում և որոնք հետագայում թերևս փոխարկվում են գլխավոր հաջորդականության սովորական աստղերի: Մեզ հայտնի չեն այնքան մեծ մասսա ունեցող լուսատու աստղեր, որոնցից բաժանման ինչ-որ պրոցեսների ճանապարհով գոյանային բաց աստղակուլտեր: Ակնհայտ է, որ աստղակուլտերը և աստղային ասոցիացիաները պետք է գոյանան հսկայական մասսա ունեցող ինչ-որ մութ կամ թույլ լուսատու օբեկտներից:

**Ընդումին երկու հնարավորություն կա.**

ա) *Սկզբնական մարմինն ունեցել է նույնքան մեծ ծավալ, որքան նրանից առաջացած աստղային սիստեմը (աստղակուլտը, ասոցիացիան): Այդ դեպքում հնարավոր է սկզբնական այդ մարմնի նույնացումը մութ միգամածության հետ: Ներկայումս կարելի է ապացուցված համարել կոսմիկական փոշուց կազմված մեծ թվով մութ դիֆառուզ միգամածությունների առկայությունը Գալակտիկայում: Այս դեպքում մենք պետք է այդ միգամածություններին վերաբերնք մի քանի հարյուր արեգակնային մասսայի համանույն մի մասսա: Դա զգալիորեն գերազանցում է մութ միգամածությունների մասսաների վերաբերյալ մինչ այժմ եղած գնահատականներին:*

բ) *Քննարկվող տիպի աստղային սիստեմների առաջացումը տեղի է ունեցել այդ սիստեմների տրամագծերի համեմատությամբ փոքր չափեր ունեցող որոշ մարմնի բաժանման և գոյացած մասերի իրարից հեռանալու ճանապարհով: Օրինակ՝ այդպիսի մարմինը կարող է ունենալ սովորական աստղերի տրամագծերի կարգի տրամագիծ: Սակայն, նշված մասերը փոխադարձ ձգողականության ուժը հաղթահարելու և մեծ հեռավորությունների վրա ցրվելու համար, բաժանման պահին պետք է ստանային զգալի կինետիկ էներգիաները Հարց է ծագում, թե ինչո՞ւ այդ կինետիկ էներգիաները դրեթե ճիշտ հավասար դուրս եկան ձգողական դաշտի հաղթահարման համար անհրաժեշտ էներգիային և ինչո՞ւ բոլորովին չեն դիտվում այնպիսի դեպքեր, երբ ձգողական դաշտի հաղթահարումից հետո աստղը պահպանում է կինետիկ էներգիայի, ուրեմն և սկզբնական արագության զգալի մասը: Ճիշտ է, այդպիսի աստղերը կհեռանային աստղակուլտից, բայց կմնային Գալակտիկայում՝ որպես արագավազ աստղեր: Սակայն Գալակտիկայում չեն դիտվում ՊԿարապի կամ նույնիսկ առհասարակ Յ տիպի արագավազ աստղեր:*

Փոքր գծային շափերի սկզբնական մարմնի հիպոթեզի հետ կապված այդ դժվարության հաղթահարման ուղիներն առայժմ չեն երևում:

Ուստի բաց թողնելով այն մարմինների այլ հատկությունների հարցը, որոնցից առաջացել են աստղակույտերը և ասոցիացիաները, մենք պետք է ստույդ համարենք միայն այդ օբեկտների ցածր լուսատվությունը:

Այդ պատկերացումը, որի համաձայն աստղակույտերը և ասոցիացիաները մինչև իրենց առաջացումը եղել են ինչ-որ շատ թույլ լուսատու օբեկտներ, գուցե շատ փոքր շառավղով, հարկավոր է կապակցել աստղային սիստեմներում ճառագայթման ինտեգրալ գործակցի մասին եղած տվյալների հետ: Աստղային սիստեմում ճառագայթման ինտեգրալ գործակցի ասելով ես հասկանում եմ աստղային սիստեմի միավոր մասսայի միավոր ժամանակամիջոցում ճառագայթած էներգիայի քանակը: «Միկրոսկոպիկ» մի մեծություն է այդ, որը բնութագրում է սիստեմի յուրաքանչյուր կետը: Պարզվում է, որ ճառագայթման այդ գարծակցի արժեքը (բայց Օրոտի) էլլիպտիկ մի քանի միգամածությունների համար կլոր հաշվով հարյուր անգամ փոքր է, քան Արեգակի շրջակայիքի համար՝ Գալակտիկայում:<sup>10</sup> Այդ գործակցի արժեքի արտածման ժամանակ Օրոտն օգտվել է համապատասխան սիստեմների պրոտոտիպան արագությունների մասին եղած տվյալներից: Օրոտը ենթադրում էր, որ ճառագայթման գործակցի այլքան փոքր արժեքը էլլիպտիկ միգամածությունների համար, վկայում է դիֆֆուզ նյութի (կոսմիկական փոշու) մեծ քանակության առկայությունը նրանց մեջ:

Ներկայումս, երբ մենք որոշ տվյալներ ունենք էլլիպտիկ համակարգությունների բնակչության մասին (Բաարե), պարզ է, որ նրանք շատ ավելի աղքատ են դիֆֆուզ նյութով, քան Գալակտիկան, նրանք գրեթե զորվել են դիֆֆուզ նյութից (տե՛ս Հավելված 2): Մնում է ենթադրել ցածր լուսատվություն և համեմատաբար մեծ մասսա ունեցող մեծ թվով օբեկտների առկայությունն այդ համակարգություններում:

ԿԱՐՄԻՐ ՀՍԿԱՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ: Հարց է առաջանում, թե ո՞րն է Յ աստղերի էվոլուցիայի ուղին, նրանց՝ մինչև այժմ անհայտ ինչ-որ օբեկտներից առաջանալուց հետո:

Ներկայումս այդ հարցին էլ գժվար է պարզ պատասխան տալ: Սակայն արժե ուշադրություն դարձնել տաք աստղերի ունե-

ցած սերտ կապի վրա՝ սառը գերհսկաների և ուշ տիպերի փոփոխական աստղերի հետ։ Այժմ արդեն հայտնի են մեծ թվով օբեկտներ, որոնց սպեկտրներում երեսում են մի կողմից՝ Օ կամ Յ տիպերի աստղերի, մյուս կողմից՝ Ա տիպի սառն աստղի բնութանիշներ։ Բավական է հիշատակել R ջրհոսի հետաքրիր աստղը, որի սպեկտրում ոչ միայն գծերի ամբողջությունը, այլև նույնիսկ անընդհատ սպեկտրը, կարծես, համեմատանում է երկու՝ տաք և սառն աստղերի անընդհատ սպեկտրների գումար։

Ենինգրադի աստրոֆիզիկոս Սոբոլի աշխատանքներից հետո պարզ է այժմ, որ իրականում այդ երկույթը կապված չէ երկու աստղերի սպեկտրների գումարման հետ, այլ խոսքը վերաբերում է տաք կորիզի և արտաքին, համեմատաբար սառը թաղանթի սպեկտրների գումարմանը։

Արդեն թաղանթի օպտիկական հաստության փոքր մեծացումը հասցնում է տաք կորիզի անմիջական ճառագայթման թուցացմանը և էներգիայի բաշխումն անընդհատ սպեկտրում ամբողջովին գառնում է Ա տիպին համապատասխան։ Կորիզի առկայությունը հայտնաբերվում է միայն շնորհիվ էմիսիոն գծերի։ Ինչպես հայտնի է, երկար-պարբերական փոփոխականների սպեկտրը հենց այդպիսի տեսք ունի։ Էլ ավելի հաստ թաղանթի գեպքում էմիսիոն գծերն էլ պետք է անհայտանան, և մենք կունենանք սովորական սառը հսկա կամ գերհսկա։

Հայտնի է նաև, որ Ա տիպի գերհսկաներն ունեն նույնպիսի մասսաներ, ինչ որ Յ և Օ տիպերի աստղերը։ Միանույնն են նաև այդ երկու կարգի աստղերի լուսատվությունները։

Եթե դեղին ու կարմիր հսկաների և գերհսկաների ներքին կառուցվածքը էապես տարբերվեր գլխավոր հաջորդականության նույնպիսի մասսա ունեցող աստղերի ներքին կառուցվածքից, ապա բնականաբար պետք է որ այլ լիներ էներգիայի աղբյուրների արտադրողականությունը նրանց մեջ։ Մինչդեռ նրանք ենթարկվում են մասսայի և լուսատվության միջև եղած հենց նույն կապազցությանը, որը սահմանված է գլխավոր հաջորդականության աստղերի համար։ Այս էլ իր հերթին ենթադրել է տալիս, որ հսկաների հյուզի և գլխավոր հաջորդականության աստղերի ներքին կառուցվածքում էական տարբերություն չկա։ Միայն նրանց արտաքին շերտերի կառուցվածքն է տարբեր։

Այսպիսով, պարզվում է, որ բարձր լուսատվություն ունեցող

տաք B և 0 տիպերի աստղերը, երբ շրջապատվում են բավականաշատ մեծ շառավիղ ունեցող նոսր թաղանթներով, կարող են ներկայանալ սառը գերհսկաների տեսքով:

Այստեղ ամեն ինչ բարեհաջող է նաև տարածական բաշխման տեսակետից, իսկ տարածական բաշխումը, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, երկու տիպերի օբեկտների գենետիկ ազգակցության որոշ հայտնիք է հանդիսանում: B տիպի աստղերի և ուշ տիպերի գերհսկաների տարածական բաշխումներն իրար շատ նման են:

Այդ տեսակետից հսկայական նշանակություն ունեն աստղերի պտտման մասին ակադեմիկոս Շայնի և ամերիկական աստրոֆիզիկոս Ստրուվի կողմից վերջին երկու տասնամյակում հաստատված փաստերը: Նրանք մատնանշում են, որ B և 0 տիպերի աստղերի զգալի մասը շատ արագ պտտվում են իրենց առանցքի շուրջը: Եթե այդ աստղերի էվոլուցիան ընթանում է գլխավոր հաշորդականության երկայնությամբ դեպի թղթակների կողմը, ապա պտտման մոմենտի պահպանման օրենքի համաձայն, նրանց մեջ պետք է դիտվեին պտտման է'լ ավելի մեծ արագություններ: Մինչդեռ դիտումները ցուց են տալիս ճիշտ հակառակը: Ճիշտ է, պտտման մոմենտի մի մասը կարող էր տարիվել դուրս նետված նյութի կողմից: Բայց այդ դեպքում հարդի կլիներ ենթադրել, թե դրույթուն ունի ինչ-որ հատուկ մեխանիզմ, որի շնորհիվ պտտման մոմենտի ձնշող մասը հեռանում է դուրս նետված նյութի հետ: Նման մեխանիզմ առայժմ չի առաջադրված: Մինչդեռ B տիպի աստղից՝ ավելի ուշ տիպի գերհսկա աստղ առաջանալու ժամանակ, մոմենտի պահպանման միևնույն օրենքի համաձայն, աստղի պտտման գծային արագությունը պետք է նվազի, ինչ և դիտվում է իրականում:

Սակայն այստեղ ես պետք է մի վերապհում անեմ: Մատնանշված հարցից անկախ՝ պտտման մոմենտի պահպանման օրենքի կատարման պահանջը հանգեցնում է դժվարությունների՝ կոսմոգոնիայի մի ամբողջ շարք այլ հարցերում: Ես նկատի ունեմ ոչ միայն արեգակնային համակարգության ծագման պրոբլեմը, այլև բազմապատիկ աստղերի ծագման հետ կապված հարցերի ամբողջ կոմպլեքսը:

Ի միջի այլոց, պտտման մոմենտի հետ կապված հենց այդ դժվարությունները վերջին ժամանակներս ստիպեցին վերացական կոսմոգոնիկ հիպոթեզների կառուցման ուղիով ընթացող շատ հե-

դինակների նորից դիմելու բռնագրավման (միևնույնն է՝ արբար նյակների կամ սկզբնական նյութի) հիպոթեզին։ Մինչդեռ փաստական բոլոր տվյալները համոզիչ կերպով ասում են, որ երկնային մարմինների սիստեմների առաջացումն ու էվոլուցիան կատարվում է ներքին պատճառների հետևանքով, ներքին գարգացման օրենքներով և պատման մոմենտների հետ կապված լուրջ դժվարությունները լոկ ցույց են տալիս մեր կողմից դեռևս շպարզված ինչ-որ էֆֆեկտների գոյությունը, որոնց ներմուծումը կվերացնի այդ դժվարությունները։

Այդ դժվարությունների առկայությունը ցույց է տալիս, որ կոսմոգոնիկ երևույթները տեսականորեն շատ ավելի խորն են, քան մինչև այժմ մենք կարծում էինք։ Ըստ երևույթին՝ այստեղ, այս ժին պրոբլեմում մենք գեռ կհանդիպենք գիտության համար սկզբունքային նորություն ներկայացնող մի ամբողջ շարք որակապես նոր, օրիգինալ երևույթների։

Սակայն, աստղերի ներքին կառուցվածքի ձիշտ տեսության բացակայության հետևանքով, այդ հարցերի տեսական քննարկումն առաջման դեռ շատ գանդապ է ընթանում։

Կոսմոգոնիայի համար հակարական նշանակություն ունեն ժամանակակից Աստրոֆիզիկայի տվյալները՝ աստղերի գարգացման շափականց արագ ընթացող մի քանի փուլերի մասին։ Այն ժամանակ, երբ աստղերի մեծամասնության կյանքի տեսությունը շափում է միլիարդավոր տարիներով, այսինքն էվոլուցիայի փուլերի մեծամասնության համար պահանջվում են այնպիսի ժամանակամիջոցներ, որոնց համեմատ մարդկային կյանքը և նույնիսկ մարդկային աստրոֆիզիկական դիտումների ամբողջ պատմության տեսությունը թվում է ակնթարթ, մենք դրա կողքին հանդիսատես ենք այն բանին, երբ մի քանի օրերի, իսկ երբեմն ժամերի ընթացքում աստղի կառուցվածքում անմիջականորեն դիտվում են աշքի ընկնող փոփոխություններ։ Նման պրոցեսներ են նոր աստղերի բռնկումները։

**ՆՈՐ ԱՍՏԳԵՐԻ:** Նոր աստղերի բռնկումներն իրենց ժամաշտաքով և արագությամբ միանգամայն ապշեցուցիչ կոսմիկ երեւվույթներ են։ Մի քանի տասնյակ ժամերի ընթացքում աստղի պայծառությունը մեծանում է մի քանի տասնյակ հազար անգամ։ Նա շրջակա տարածության մեջ դուրս է նետում (1000 կմ/վրկ. կարգի արագությամբ) գագային թաղանթ, որը մինչ այդ նրա մասսայի մի մասն էր կազմում։ Ըստ երևույթին, այստեղ մեմք

գործ ունենք ներառությային էներգիայի մեծ քանակների համարյա ակնթարթային ազատման հետ կապված հսկայական պայմանի հետ: Մինը ենթադրում էր, որ նոր աստղի բռնկումը հանդիսանում է արագ անցման պրոցես «սովորական» աստղի վիճակից—սպիտակ թղթուկի վիճակին:

Սակայն, աստղային համակարգություններում նորերի բռնկման հաճախականությանը վերաբերող տվյալները մեզ համոզում են, որ այդ համակարգությունները կազմող աստղերի գոնեմ մի մասի կյանքում տեղի են ունենում մեկից ավելի այդպիսի բռնկումներ:

Այդ կապակցությամբ արժե հիշատակել Մոսկվայի աստղաբետներ Կուկարկինի և Պարենաֆոյի<sup>11</sup> նորանման փոփոխականներին վերաբերող հիանալի հետազոտության մասին:

Բանն այն է, որ նոր աստղերի հետ մեկտեղ արդեն վաղուց հայտնի են այսպես կոչված նորանման փոփոխականները: Դրանք այնպիսի աստղեր են, որոնց բռնկումները կրկնվում են որոշակի, թեպետև ոչ հաստատուն ժամանակամիջոցներից հետո: Նորանմանների բռնկումները սովորաբար ավելի փոքր մասշտաբ ունեն, քան նորերի բռնկումները: Զնայած երկու հաջորդական բռնկումների միջև ընկած ժամանակամիջոցը տարբեր է լինում, այսինքն՝ ցիկլը փոփոխական է, այնուամենայնիվ յուրաքանչյուր նորանման փոփոխականի համար մենք ունենք ցիկլի որոշ միջին երկարություն՝ երկու հաջորդական բռնկումների միջև:

Պարզվեց, որ ցիկլի միջին երկարության և պայծառության փոփոխության միջին ամպլիտուդի միջև գոյություն ունի պարզ ֆունկցիոնալ կախում: Որքան մեծ է ամպլիտուդը, այնքան երկար է միջին ցիկլը: Եթե այդ կախումն էքստրապոլացիայի ենթարկենք մինչև սովորական նորերի ամպլիտուդները, ապա կստանանք, որ յուրաքանչյուր նորի բռնկում պետք է կրկնվի մի քանի հազար տարին մեկ անգամ: Այլ խոսքով, միտք ծագեց, որ նորերը նորանմաններից տարբերվում են միայն ցիկլի երկարությամբ:

Պարենաֆոյի և Կուկարկինի ենթադրությունները փայլուն կերպով հաստատվեցին, երբ անցյալ տարի, մեր աշքի առաջ տեղի ունեցավ Տ Հյուսիսային թագի աստղի երկրորդ բռնկումը: Նրա առաջին բռնկումը տեղի է ունեցել 1866 թվին: Մինչև 1946 թիվը դիտվել էր այդ աստղի միայն մեկ բռնկում և նա համարվում էր սովորական նոր: Պարզվեց, որ նրա երկու բռնկումների միջև ընկած ժամանակամիջոցը լրիվ համապատասխանում է ամպլիտուդի և

ցիկլի երկարության միջև գոյություն ունեցող մատնանշված կախմանը:

Այսպիսով, այժմ անկասկած է, որ բոլոր սովորական Նորերը վերակրկնվող են:

Իմ աշխատակիցների կողմից կատարված հաջվումների հետևանքով, շատ մեթոդներով որոշվել են նորերի բռնկումների ժամանակ դուրս նետված թաղանթների մասամբները:<sup>12</sup> Պարզվել է, որ յուրաքանչյուր բռնկման ժամանակ դուրս է նետվում Արեգակի մասսայի  $10^{-5}$  կարգի մասսա: Այստեղից բնական է եզրակացնել, որ յուրաքանչյուր առանձին բռնկման ժամանակ նորի ստրոմ-տուրան քիչ է փոխվում (քանի որ մասսան էլ քիչ է փոխվում), բայց մի ամբողջ շարք հաջորդական բռնկումները հասցնում են աստղի ստրուկտուրայի արմատական փոփոխությունը:

Հարց է ծագում, թե երկու ի՞նչպիսի վիճակների միջև կատարվող անցմանն է համապատասխանում նորի բռնկումների այդ հաջորդականությունը, որն ուղեկցվում է մասսայի էական փոփոխությամբ:

Միևնույն հարցը կարելի է տալ նաև նորանման փոփոխականների վերաբերմամբ:

Վերջապես, հակայական նշանակություն ունեն Գերնորերը, այսինքն՝ աստղերի այնպիսի բռնկումները, որոնց ժամանակ աստղերը մի քանի օրում դառնում են Արեգակից հարյուր միլիոն անգամ պայծառ, ապա նրանց պայծառություններն սկսում են աստիճանաբար թուլանալ: Հաշվումը ցուց է տալիս, որ Գերնորերի բռնկումների ժամանակ մեկ անգամից գուրս է նետվում մի մասսա, որը, համենայն դեպս, աստղի մասսայի զգալի մասն է կազմում: Այդ պատճառով նման Գերնորի բռնկումն արդեն նշանակում է աստղի ամբողջ ստրուկտուրայի թոփշքածն կատարվող փոփոխություն:

Կրկին հարց է ծագում, թե ի՞նչ էին Գերնորերը բռնկումից առաջ և ինչի՞ են փոխարկվում նրանք բռնկումից հետո:

Կարելի է շատացնել նման օրինակները, երբ տրված է միջակա վիճակը կամ անցման պրոցեսը, բայց ոչինչ հայտնի չէ սկզբանական ու վերջնական վիճակների մասին:

Ժամանակակից Աստրոֆիզիկային, Նոր աստղերի, Գերնոր, Նորանման փոփոխականների կողքին, հայտնի են մի ամբողջ շարան տիպերի աստղեր, որոնք կարող են համախմբվել ոչ ստացիոնար աստղերի մի ընդհանուր կարգում: (Եթե տիպի և Շ Անդրոսե-

դաշի տիպի աստղեր, պլանետար միգամածություններ և այլն): Այդ բոլոր ոչ ստացիոնար վիճակներն անցումնային են և սահմանափակ տեղություն ունեն: Յուրաքանչյուր դեպքում նրանք իրար չեն կապում են աստղի կյանքի երկու տարրեր փուլեր, և շափականց էական է այն հարցը, թե ի՞նչպիսի նախորդող ու հաջորդող վիճակներ են համապատասխանում տվյալ ոչ ստացիոնար վիճակներին:

Այստեղ ես կրերեմ մի օրինակ ևս, որպեսզի հետո ցուց տամ նմանօրինակ խնդիրների լուծման ձանապարհը:

ԿԱՐՃ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՑԵՖԵԽԻԴՆԵՐԻ: Կարճ պարբերական ցեֆեխիդները իրենց մի ամբողջ շարք առանձնահատկություններով կազմում են աշխի ընկնող աստղերի խստորեն գծագրված խումբ: Նրանց պայծառության պարբերական փոփոխություններով, այսինքն՝ պուլսացիաներով: Պետք է ենթադրել, որ փոփոխականությունը չի տեսում այդ աստղերի ամբողջ կյանքի ընթացքում: Հավանական է, որ իր կյանքի մի որոշ փուլում միայն աստղը հանդես է գալիս որպես փոփոխական: Հետաքրքիր է պարզել, թե ի՞նչ վիճակում էին գտնը վում նրանք մինչև պուլսացիայի սկիզբը, ի՞նչ վիճակի են անցնում պուլսացիան վերջանալուց հետո և ո՛րքան է փոփոխականության փուլի տեղությունը:

Նշանակենք կարճ պարբերական ցեֆեխիդի վիճակը՝ մինչև այդ փուլը մտնելը — X, իսկ նրանից դուրս գալուց հետո — Y: Հարց է ծագում, թե ինչպիսին են X-ը և Y-ը:

Հետևյալ մեթոդը կօգնի պարզելու, թե աստղերի ի՞նչպիսի ֆիզիկական տիպերի մեջ պետք է փնտրել X և Y աստղերը:

Բանն այն է, որ աստղերի արագությունների բաշխումը չի կարող զգալիորեն փոխվել աստղի ամբողջ կյանքի տեղության համեմատությամբ ավելի կարճ ժամանակամիջոցում: Ուստի կարճ պարբերական ցեֆեխիդների արագությունների բաշխումը քննարկվող դեպքում պետք է նման լինի ինչպես X, այնպես էլ Y աստղերի արագությունների բաշխմանը: Քանի որ արագությունների բաշխումն ինքնին որոշում է աստղերի տարածական բաշխումը, ապա նույնը կարելի է ասել համապատասխան տարածական բաշխումների մասին: Բայց կարճ տարբերական ցեֆեխիդների տարածական բաշխումը խիստ կարևոր այն առանձնահատկությունն ունի, որ այդ աստղերը հանդիպում են Գալակտիկայի հարթությունից շատ մեծ հեռավորությունների վրա: Հետևաբար, թե' X և թե' Y

աստղերը նույնպես պետք է հանդիպեն տարածության համապատասխան մասերում: Որքան կարճ է փոփոխականության փուլի տևողությունը, X—Y փուլերի համեմատությամբ, այնքան էլ մեծ պետք է լինի X—Y աստղերի թիվը կարճ պարբերական ցեֆերիդների համեմատությամբ: Այդ տեսակետից հետաքրքիր է Հյումասոնի և Ցվիկի այս տարի լույս տեսած աշխատությունը<sup>13</sup> գալակտիկ բարձր լայնություններում կապույտ աստղերի որոշ քանակի առկայության մասին: Այդ աշխատությունը ցույց է տալիս, որ տարածության քննարկվող տիրություններում կարճ պարբերական ցեֆերիդների և գնդաձև աստղակույտերի կողքին զգալի թվով ուրիշ տիպերի աստղեր էլ կան: Այդ աստղերի թվի մասին շատ սակավ տվյալներ կան, բայց նրանք ստիպում են եզրակացնել, որ կարճ պարբերական ցեֆերիդի փուլի տևողությունը, ըստ երեսութիւն, չի կարող շատ փոքր լինել աստղի ամբողջ կյանքի տևողության համեմատությամբ: Այդ փուլի տևողությունը շափում է առնվազն տասնյակ միլիոն տարիներով, եթե ոչ ավելի: Այնուամենայնիվ, վերջնական եզրակացությունների հանգելու համար դեռ անհրաժեշտ է տվյալներ ստանալ տարածության այդ տիրություններում գտնվող թղունակների թվի մասին:

Այն ամենը, ինչ ասվեց կարճ պարբերական ցեֆերիդների մասին, կիրարկելի է նաև մյուս անցումնային փուլերի նկատմամբ (Նորեր, Գերնորեր, պլանետար միգամածություններ և այլն): Այդ օբեկտների զարգացման մյուս փուլերը մենք պետք է փնտենք դրանց նման տարածական բաշխում ունեցող աստղերի մեջ: Ցավոք սրանի, երկնքի վրա տեսանելի բաշխումից տարածականին անցնելու հետ կապված մեծ գելարագությունների պատճառով մենք լավ շգիտենք առանձին ֆիզիկական տիպերի տարածական բաշխումները: Բայց հենց այժմ կարելի է ասել, օրինակ, որ պլանետար միգամածությունների և թղունակների բաշխումների միջև նմանություն կա: Քննարկվող բնագավառից կարելի էր բերել մի ամբողջ շարք այլ հետաքրքիր օրինակներ, բայց ավելի նպատակահարմար է սպասել մինչև ֆիզիկական տարբեր բնույթի աստղերի տարածական բաշխման և արագությունների բաշխման ծրենքների մասին ավելի լիսկատար տվյալներ կկուտակվեն:

**ՊԼԱՆԵՏԱՐ ՄԻԳԱՄԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ:** Մինչև վերջերս թվում էր, թե մենք մոտ ենք պլանետար միգամածությունների ծագման հարցի լուծմանը: Բանն այն է, որ նոր աստղերի բռնկումների ժամանակ դուրս նետվող գագային թաղանթները որոշ նմանություն

ունեն պլանետար միգամածությունների հետ։ Հաստատված է, սակայն, որ պլանետար միգամածությունների մասսաները չափվում են Արեգակի մասսայի առնվազն՝ հարյուրերորդական (եթե ոչ տասերորդական) մասերով, ուստի և հազարավոր անգամ գերազանցում են նորերի կողմից դուրս նետվող թաղանթների մասսաներին (որոնց մասսան կազմում է Արեգակի մասսայի մոտ մեկ շարյուր հազարերորդական մասը)։ Մյուս կողմից՝ հաստատված է, որ նորի պայծառությունը մաքսիմումում այնքան բարձր է, որքան մեծ է դուրս նետվող մասսան։ Հետևաբար, եթե միայն պլանետար միգամածություններն առաջացել են նորի բռնկմանը՝ համանման պայթյունների հետևանքով, ապա վերջինների մասշտաբը շատ ավելի մեծ պետք է լինի, իսկ բռնկված աստղի պայծառությունը՝ մաքսիմումում հազարավոր անգամ բարձր, քան նորի մոտ։ Բնական է ենթադրել, որ մեծ մասշտաբի այդպիսի պայթյուններ են Գերնորերի բռնկումները և այդ բռնկումների հետևանքով են առաջանում պլանետար միգամածությունները։

Նկատենք, որ ինքնըստինքյան հազիվ թե որևէ կասկած հարուցի այն ենթադրությունը, թե պլանետար միգամածություններն առաջանում են կենտրոնական աստղերի կողմից թաղանթներ դուրս նետվելու հետևանքով։ Դիտումները ցույց են տալիս, որ դիտվող պլանետար միգամածությունները լայնացման պրոցեսում են գտնվում։ Մյուս կողմից՝ տեսականորեն ապացուցված է, որ պլանետար միգամածությունն ստատիկ հավասարակշռության վիճակում դժուվել չի կարող։

Պլանետար միգամածությունների լայնացման դիտվող արագությունները թույլ են տալիս հաշվել, որ նրանց հասակն ըստ մեծության կարգի չի կարող գերազանցել տաս հազար տարվան, քանի որ այդ ժամանակամիջոցում նրանք պետք է ցրվեն տարածության մեջ և անտեսանելի դառնան։ Մյուս կողմից՝ Պարենադոյի<sup>14</sup> կատարած հաշվումներով պոլոր պլանետար միգամածությունների թիվը մեր Գալակտիկայում պետք է լինի 15.000-ի կարգի։ Այս պայմաններում՝ պլանետար միգամածությունների թիվը ներկա մակարդակի վրա պահպանելու համար, անհրաժեշտ է, որպեսզի ամեն տարի միջին հաշվով գոյանան մեկից ավելի պլանետար միգամածություններ։ Մինչդեռ, ըստ եղած տվյալների, ամեն մի Գալակտիկայում միջին հաշվով բռնկվում է մի Գերնոր՝ հինգ հարյուր տարին մեկ անգամ։ Ուստի Գերնորերի բռնկումները չեն կարող նույնացվել պլանետար միգամածություն-

ների գոյացման պրոցեսների հետ։ Հետևաբար, պլանետար միգամածությունների ծագման հարցը պահանջում է հետագա ուսումնասիրություն։

Ինչ վերաբերում է Գերմորերին, ապա պետք է ուշադրություն դարձնել վերջերս Խուսակովի<sup>15</sup> արտահայտած այն ենթադրության վրա, թե Գելնորերի բռնկումների հետևանքով գոյանում են դիֆփուզ միգամածություններ։

**ԱՍՏՂԵՐԻ ԵՎ ՄԻՋԱՍԴԱՅԻՆ** ՆՅՈՒԹԻ ԷՎՈԼՈՒՑԻՈՆ ԿԱՊԸ։ Այս կապը հանդիսանում է Աստրոֆիզիկայի ամենահետաքրքիր պրոբլեմներից մեկը։ Այսպես կոչված կոսմոգոնիկ հիպոթեզների հեղինակները ձգուում էին ապացուցել, որ աստղերը և մյուս երկնային մարմինները գոյացել են միգամածություններից։ Միշատդային նյութը հենց ներկայացնում է միգամածությունների ամբողջություն։ Մենք արդեն տեսանք, որ ժամանակակից Աստրոֆիզիկան շատ դեպքեր գիտե, երբ նյութը գազային վիճակում դուրս է նետվում աստղերից։ Միաժամանակ խստ ծանրակշիռ հիմքեր կան կարծելու, որ միջաստդային գազից կարող են գոյանալ միջաստդային փոշու մասնիկներ։

Հակառակ պրոցեսների — դիֆֆուզ մատերիայի փոխարկումն աստղերի — առկայությունն առայժմ չի ապացուցված։ Նրանց տեսականորեն հնարավոր լինելը պատշաճ ձևով չի հիմնավորված և կարիք ունի ուսումնասիրության։

Հակառակ է, սակայն, ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ դիֆֆուզ միգամածությունները պատահում են միևնույն գալակտիկաներում և գալակտիկաների միևնույն սիրութներում, որտեղ հաճախ են պատահում բաց աստղակույտերը, Օ և Յ տիպերի աստղերը և այլ երիտասարդ գոյացումներ։ Դիֆֆուզ միգամածությունները պատկանում են, ըստ Բաադեր՝ տերմինաբանության, Դալակտիկայի բնակչության առաջին տիպին։ Ուստի նրանց էվոլուցիոն դերն արժանի է մանրակրկիտ ուսումնասիրության։

**ԱՍՏՂԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԻ ՏԻՊԵՐԻ**։ Աստղային համակարգությունների բնակչության երկու տիպերի սահմանումը հանդիսանում է հիմնական փաստ, որը չի կարելի անտեսել աստղային էվոլուցիայի պրոբլեմների ուսումնասիրության ժամանակ։ Քանի որ այդ երկու տիպերի բնակչությունը կազմող աստղերի տարածական բաշխումները խստորեն տարբերվում են իրարից, ապա պետք է ընդունել, որ մշտական

անցումներ չեն կատարվում այդ տիպերից մեկի մեջ մտնող վիճակներից գեղի մյուս տիպի մեջ մտնող վիճակները։ Այդ պատճառով ահա, կարձ պարբերական ցեֆերները և երկրորդ տիպին պատկանող մյուս օբյեկտները էվոլյուցիոն կերպով անմիջականորեն կապված չեն B, O, Վոլֆ-Ռայե և այլ տիպերի աստղերի հետ։ Սակայն, որևէ շափով բացառված չէ իր արմատներով մեր Գալակտիկայի կազմավորման շրջանին համող ավելի խոր էվոլյուցիոն կապը։

Գալակտիկաների բնակչության տարբեր տիպերի վերաբերյալ հաստատված փաստերը շատերին արդեն հարկադրել են հրաժարվել նախկին սխալ պատկերացումներից (օրինակ, այն պատկերացումից, թե էլլիպտիկ միգամածությունները գալակտիկաների զարգացման սկզբնական փուլն են հանդիսանում)։

Այստեղ մենք ցանկանում ենք ուշադրություն դարձնել միայն հետեւյալ հանգամանքի վրա։ Մագելլանի Ամպերի տիպի գալակտիկաներում մենք ունենք գերհսկաների, P Կարապի տիպի աստղերի և բաց աստղակույտերի մեծ առատություն։ Դրանք բոլորը, անկասկած, երիտասարդ գոյացումներ են։ Մասնավորապես Մագելլանի Մեծ Ամպում ուշադրություն է գրավում զգալի քանակությամբ գերհսկաներ պարունակող և արտասովոր մեծ գծային շափեր ունեցող բաց աստղակույտերի մեծ թիվը։ Այսպես, NGC 1910 աստղակույտը, որին պատկանում է հայտնի գերհսկաներից ամենապայծառը՝ S Doradus-ը, 70 պարսեկի կարգի տրամագիծ ունի։

Մյուս կողմից հայտնի է, որ Գալակտիկայում դիտվող բաց աստղակույտերի տրամագծերը երկու-երեք պարսեկի կարգի են։ Այն պավորությունն է ստացվում, թե Մագելլանի Մեծ Ամպը շատ ավելի հարուստ է մեծ տրամագիծ ունեցող բաց աստղակույտերով։

Իրականում տարբերությունը միայն թվացող է։ Հեշտ է տեսնել, որ վերևում քննարկված և մեծ թվով գերհսկաներ պարունակող մեր Գալակտիկայի աստղային ասոցիացիաները, արտաքին գալակտիկաներից դիտելիս, պետք է ամբողջովին աշքի ընկնեն գալակտիկ աստղային ֆոնի վրա, քանի որ գերհսկաները շատ հազվադեպ են ֆոնի աստղերի մեջ։ Խսկ մեր Գալակտիկայի ներսում գտնվող դիտողի համար այդ գերհսկաներն ունեն նույնպիսի տեսանելի պայծառություն, ինչ որ դիտողին մոտ գտնվող և ասոցիացիայի հետ կապ չունեցող, ցածր բացարձակ պայծառություն

ունեցող աստղերը, որի հետևանքով գերհսկաները կորչում են դրանց մեջ։ Այդպիսի դիտողի աշքին են զարնվում միայն ասոցիացիաների կորիզները, որոնք սովորական գալակտիկ աստղակույտեր են։

Այսպես, օրինակ, Մագելլանի Ամպերից դիտելիս չ և ի Պերսեյի աստղերի շուրջը գտնվող ասոցիացիան պետք է աշքի ընկնի որպես կրկնակի կորիզ և 200 պարսեկ տրամադիծ ունեցող մի հսկայական աստղակույտ։

Ակներև է, որ այդ շափի ասոցիացիաներ Մագելլանի Մեծ Ամպում չկան։

Գալակտիկաների բնակչության տարբեր տիպերին վերաբերող փաստերի նշանակությունը լիովին կպարզվի մոտակա տարիներում։ Այդ փաստերը կօգնեն ավելի արագ ընդհանրացնելու այն փաստական նյութը, որը վերաբերում է մեր Գալակտիկային։

Սյստեղ մենք բերեցինք միայն առանձին օրինակներ, որոնք ցույց են տալիս ժամանակակից Աստրոֆիզիկայի կողմից հաստատված շատ փաստերի հիմնական կոսմոգոնիկ նշանակությունը։ Այդ օրինակները շատ հարցերի տալիս են ուղիղ պատասխաններ, բայց այդ պատասխանները դեռևս չի կարելի միացնել աստղերի գարգացման միամանական մի տեսության մեջ։

Մասնավորապես, ինչպես տեսնում եք, մենք մինչև հիմա դեռ ոչ մի եղրակացություն չենք արել մոլորակների առաջացման պրոցեսի մասին։

Բայց ակներև է, որ հետագյում կոսմոգոնիան ավելի ու ավելի կհենվի ժամանակակից Աստրոֆիզիկայի կողմից հաստատված փաստերից կազմված ամուր ու լայն բազայի վրա և ավելի ու ավելի կկորցնի սպեկովատիվ դիսցիպլինի բնույթը, որ նույնիսկ մինչև վերջերս հասուց էր նրանք։

Հաճելի է տեսնել, որ սովորական աստղագետներն ամենաաշքի ընկնող տեղն են գրավում գիտության այդ ուղղության մշակման գործում։ Ներփայումս, շնորհիվ Սովորական Կառավարության բացառիկ ուշադրության, կատարվում է մեր Աստղագիտության դիտողական բազայի ամենալիակատար վերակառուցումը։ Այդ թույլ կտա առաջիկայում ամրապնդելու սովորական աստրոֆիզիկոսների դեկավար վերեւում մատնանշված պրոբլեմների լուծման գործում։

## Հավելված 1

**ԱՍՏԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ԴԻՍՍՈՑԻԱԼԻՎ ՀԱՎԱՍԱՐՈՒ-  
ԿՇՈՌԻԹՅԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Աստղային համակարգությունում՝ մեխանիկական տեսակետից հնարավոր են ինչպես աստղագույքերի քայլայման, նույնպես և երկու միայնակ աստղերից՝ զույգի առաջացման պրոցեսները։ Զույգի քայլայմանը կարող է կատարվել նրա մուտք երրորդ, խանգարիչ աստղի անցման ժամանակ։ Հակառակ պրոցեսը, երբ երեք աստղերի հանդիպման ժամանակ, նրանցից մեկի ազդեցության տակ՝ մյուս երկուսը կազմում են զույգ, հարաբերական շարժման էներգիան տալով առաջին աստղին, հանդեցնում է վրկնակի աստղի առաջացմանը։ Աստղային համակարգությունում ժամանակի ընթացքում պետք է հաստատվի դիսոցիատիվ հավասարակությունը, որի ժամանակ իրար հակադիր այդ երկու պրոցեսները կոմպենսվում են։

Պարզէնք, թե ներկայումս Գալակտիկայում գոյություն ունի, արդյոք, դիսոցիատիվ հավասարակշռություն։

Ընդունին որոշակիության համար քննարկենք երկու տեսակ աստղերից կազմված զույգեր՝  $\alpha$  տեսակի  $m_{\alpha}$  մասսայով և  $\beta$  տեսակի  $m_{\beta}$  մասսայով աստղեր։ Ենթադրենք՝  $m_{\alpha} > m_{\beta}$ ,

$\alpha$  և  $\beta$  միայնակ աստղերի թիվը միավոր ծավալում նշանակենք համապատասխանաբար  $n_{\alpha}$  և  $n_{\beta}$ ։ Այժմ միավոր ծավալից ընտրենք բոլոր այն  $\alpha$  և  $\beta$  զույգերը, որոնց համար կոմպոնենտների միջև եղած հեռավորությունը գտնվում է  $r_1$  և  $r_2$  սահմանների միջև։ Թող նրանց թիվը լինի  $n_{\alpha\beta}$  ( $r_1, r_2$ )։ Այդպիսի զույգերի թիվը համար, դիսոցիատիվ բանաձևի համաձայն, ունենք՝

$$\frac{n_{\alpha\beta}(r_1, r_2)}{n_{\beta}} = \frac{\Gamma(r_1, r_2)}{(2\pi m_{\beta} \Theta)^{3/2}} n_{\alpha}, \quad (1)$$

որտեղ  $\Gamma(r_1, r_2)$  ստատիստիկ գումարն է ըստ  $\beta$  արբանյակի մի  $\alpha$  աստղի շուրջը գտնվելու այն բոլոր հնարավոր վիճակների, որոնց ժամանակ նրա հեռավորությունը՝  $\alpha$ -ից պարփակված է  $r_1$  և  $r_2$  սահմանների միջև։

Այսուեղ 3/2 Θ-ն միայնակ աստղերի միջին կենետիկ էներգիան է։

Ունենք՝

$$\Gamma(r_1, r_2) = \int e^{-\frac{r}{\Theta}} d\Gamma_\beta,$$

որտեղ ինտեգրումը կատարվում է ֆազային տարածության այն տիրույթով, որի ներսում հեռավորությունը գլխավոր աստղից գտնվում է քննարկվող սահմանների միջև:

Վերցնենք այժմ այդ սահմաններն այնպես, որ ֆազային տարածության այդ մասում ամենուր տեղի ունենաւ  $\varepsilon \ll \Theta$  պայմանը: Այդ պահանջը, օրինակ, կրավարարվի, եթե վերցնենք՝

$$r_1 = 100 \text{ աստղ } m_{\text{իավոր}} \quad r_2 = 1000 \text{ աստղ. } m_{\text{իավոր}}:$$

Այդ դեպքում ինտեգրալի նշանի տակ  $e^{-\frac{r}{\Theta}} \Gamma_\beta$  է փոխարինել  $m_{\text{իավորով}}$

$$\begin{aligned} \Gamma(r_1, r_2) &= \int d\Gamma_\beta = \int \int \int \int \int \int dx dy dz dp_x dp_y dp_z \\ &= 16\pi^2 \int_{r_1}^{r_2} dr \int_0^{P_0} r^2 p^2 dp, \end{aligned}$$

որտեղ  $r$ -ն իմպուլսի վեկտորի մեծությունն է: Գլխավոր աստղից տված բարձրության վրա,  $\epsilon_{\text{լիալիք}}$  շարժման ժամանակ,  $P_0$ -ն չի կարող մեծ լինել  $P_0$ -ից, որտեղ  $P_0$ -ն որոշվում է

$$\frac{P_0^2}{2m_\beta} = \frac{Gm_\alpha m_\beta}{r}$$

բանաձևով, հակառակ դեպքում արթանյակը կլինի հիպերբոլական: Աւատի:

$$\int_0^{P_0} p^2 dp = \frac{P_0^3}{3} = \frac{1}{3} m_\beta^3 \left( \frac{2 G m_\alpha}{r} \right)^{3/2},$$

որտեղից հետևում է, որ

$$\Gamma(r_1, r_2) = \frac{16}{3} \pi^2 m_\beta^3 (2 G m_\alpha)^{3/2} \int_{r_1}^{r_2} r^{-1/2} dr = \frac{32}{9} \pi^2 m_\beta^3 (2 G m_\alpha)^{3/2} (r_2^{3/2} - r_1^{3/2})$$

կամ, քանի որ տվյալ օրինակում  $r_2^3 \gg r_1^3$

$$\Gamma(r_1, r_2) = \frac{32}{9} \pi^2 m_\beta^3 (2 G m_\alpha r_2)^{3/2},$$

Տեղադրելով այդ արդյունքը՝ (1)-ում, կգտնենք՝

$$\frac{n_\alpha(r_1, r_2)}{n_\beta} = \frac{32}{9} \pi^{1/2} \left( \frac{G m_\beta m_\alpha}{r_2 \Theta} \right)^{3/2} n_\alpha r_2^3$$

**Աշխատում գտնվող**

$$n_\alpha r_2^3 \propto \left( \frac{G m_\beta m_\alpha}{r_2 \Theta} \right)^{3/2}$$

արտադրիչներն ունեն շատ պարզ ֆիզիկական իմաստ՝

Նրանցից առաջինը՝  $r_2 = 1000$  աստղ. միավոր շառավիղը ունեցող գնդում գտնվող  $\alpha$  աստղերի թիվն է: Այն ավելի փոքր է  $10^{-7}$ -ից: Երկրորդ արտադրիչը ներկայացնում է 1000 աստղ. միավոր հեռավորությամբ զույգի պոտենցիալ էներգիայի և միայնակ աստղի միջին կինետիկ էներգիայի հարաբերության  $2/3$  մասը վերցրած  $3/2$  աստիճանում: Թվապես նրա արժեքը համեմայն դեպք  $10^{-4}$ -ից փոքր է, եթե միայն  $m_\alpha$  չհամարենք Արեգակի մասսայից շատ տասնյակ անգամ մեծ: Ուստի ստանում ենք՝

$$\frac{n_\alpha(r_1, r_2)}{n_\beta} < 10^{-10}$$

Մինչդեռ դիտումները ցույց են տալիս, որ կոմպոնենտների  $100$ -ից մինչև  $1000$  աստղ. միավոր հեռավորություն ունեցող զույգերը կազմում են բոլոր զույգերի զգալի մասը: Վիզուալ-կրկնակի աստղերի պատկառելի մասն ունի հենց այդպիսի հեռավորություններ: Եթե վերցնենք բոլոր և տեսակների գլխավոր աստղերը, առպա համեմայն դեպք՝

$$\frac{n(r_1, r_2)}{n_\beta} > 10^{-2}$$

Այսպիսով, կոմպոնենտների քննարկված հեռավորություններով կրկնակի աստղերի դիտվող տոկոսը միայնակների համեմատ  $10^{-8}$  անգամ գերազանցում է այն տոկոսին, որը պետք է որ լիներ դիտութիւնների հավասարակշռության ժամանակ:

Քանի որ մյուս կողմից՝ դիտացիատիվ հավասարակշռության ժամանակ զույգերի քայլքայման դեպքերի թիվը հավասար է ուն-

կոմբինացիաների թվին, ապա կարելի է ասել, որ մեր աստղային համակարգության ներկա վիճակում զույգերի քայլայման դեպքերի թիվը ավելի քան  $10^8$  անգամ գերազանցում է եռակի մերձեցումների հետևանքով զույգերի առաջացման դեպքերի թիվն:

Վերջում նշենք, որ վերևում մենք սահմանափակվեցինք որոշակի հեռավորությամբ կոմպոնենտներ սննեցող զույգերով՝ դիստանցիատիվ բանաձիկն որոշակիություն տալու համար: Իսկ ընդհանրապես բոլոր զույգերի մասին խոսելիս հարկավոր է հաշվի առնել հեռավորությունների համար ստորին և վերին սահմաններ (վերին սահմանը պայմանավորվում է նրանով, որ հեռավորությունը զույգի կոմպոնենտների միջև չի կարող միջին միջաստղային հեռավարությունից շատ տվելի մեծ լինել, իսկ ստորինը՝ աստղի ֆիզիկական շառավղի առկայությամբ): Նրանց որոշումը կպահանջի լրացուցիչ հաշվումներ, ընդ որում ստորին սահմանը կախում կունենա նաև աստղերի տիպից: Սակայն, այս դեպքում ևս կստացվեն համանման հետևություններ:

## Հավելված 2

### ԷԼԼԻՊՏԻԿ ՄԻԳԱՄԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՆՈՂ ՆՅՈՒԹԻ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Մակրոսկոպիկ տեսակետից յուրաքանչյուր աստղային սիստեմ մենք կարող ենք բնութագրել տալով նրանում ծավալային ձարագայթման դ և կլանման ռ գործակիցները, որպես կետի ֆունկցիաներ, ընդ որում դ գործակիցը պայմանավորվում է աստղերի ճառագայթումով։ Այդ ժամանակ սիստեմից դուրս եկող լույսի ինտենսիվությունը կորոշվի

$$I = \int_0^\infty e^{-z} \eta ds, \quad (1)$$

բանաձևով, որտեղ  $ds$  -ը ճառագայթի ճանապարհի էլեմենտն է, իսկ  $\tau$ -ն ճառագայթման վրա Տ արացիսով կետի օպտիկական խորությունն է։

$$\tau = \int_0^s \alpha ds.$$

Քանի որ  $d\tau = z ds$ , ապա (1) հավասարումը գրենք

$$I = \int_0^{\tau_1} e^{-z} B ds,$$

տեսքով, որտեղ

$$B = \frac{\eta}{z},$$

իսկ  $\tau_1$ -ը ըննարկվող ուղղությամբ ամբողջ սիստեմի լրիվ օպտիկական հաստությունն է։

Եթիւ միջին արժեքը ինտեգրալից դուրս բերելով՝ ստանում ենք

$$I = \bar{B} (1 - e^{-z_1}), \quad (2)$$

որտեղից

$$\bar{B} > I \quad (3)$$

Գալակտիկ հասարակածում որևէ ուղղությամբ դիտելով Ծիր-Կաթինի պայծառությունը, մենք կարող ենք ընդունել օպտիկական հաստությունն այդ ուղղությամբ՝ շատ մեծ: Ուստի Ծիր-Կաթինում ինտենսիվության համար՝ համաձայն (2)-ի, կոնենանք՝

$$I_{\text{ծիր-կաթին}} = \bar{B}_{\text{գալ.}}$$

Մյուս կողմից՝ դիտելով էլլիպտիկ միգամածությունների կենտրոնական տիրութիները, մենք համդիպում ենք Ծիր-Կաթինի պայծառությունից համարյա 100 անգամ մեծ ինտենսիվությունների՝

$$I_{\xi_L} = 100 I_{\text{ծի.}} = 100 B_{\text{գալ.}}$$

Համեմատելով այս (3)-ի հետ, ստանում ենք

$$B_{\xi_L} > 100 \bar{B}_{\text{գալ.}}$$

Կամ

$$\left(\frac{\eta}{\alpha}\right)_{\xi_L} > 100 \left(\frac{\eta}{\alpha}\right)_{\text{գալ.}},$$

այլ խոսքով՝ ճառագայթման գործակցի հարաբերությունը կլամման գործակցին, այսինքն՝ լուսավոր նյութի քանակի հարաբերությունը մութ նյութի քանակին, էլլիպտիկ միգամածություններում ավելի քան 100 անգամ գերազանցում է այդ հարաբերությանը — Գալակտիկայի՝ Արեգակին շրջապատող մասում:

Այսպիսով, էլլիպտիկ միգամածությունների մակերևությանը բարձր պայծառության փաստը միայն, արդեն եզրակացնել է տալիս, որ այնտեղ գոյություն ունի կլանող նյութի պրակտիկ բացակայություն, գոնե անընդհատ բաշխման տեսքով:

Դիտումները չեն հաստատում նաև նրանց մեջ առանձին մութ ամպերի առկայությունը:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Համբարձումյան Վ. և Շայե Փ.—Астрономический журнал, **13**, 1, 1936.
2. Պարենագո Պ. Պ.—Астрономический журнал, **21**, 223, 1944.
3. Համբարձումյան Վ.—Природа, № 2, էջ 21, 1939.
4. Ջիմս—Nature, **136**, 432, 1935.
5. Համբարձումյան Վ. Հ.—Астрономический журнал, **14**, 207, 1937.
6. Համբարձումյան Վ. Հ.—Ե. Ա., էջ 217—218.
7. Համբարձումյան Վ. Հ.—Ученые записки ЛГУ, № 22, 19, 1938.
8. Կողմել Դ. Ա.—Monthly Notices of RAS, **94**, 430, 1934.
9. Զոյ—Astrophysical Journal, **102**, 168, 1945.
10. Օորտ—Astrophysical Journal, **91**, 273, 1940.
11. Կուկարկին Բ. Վ. և Պարենագո Պ. Պ.—Переменные звезды, **1**, 217, Մոսկվա, 1937.
12. Համբարձումյան Վ. Հ.—Теоретическая астрофизика, էջ 214, Լենինգրադ, 1939.
13. Հյումասոն և Ցիլիի—Astrophysical Journal, **105**, 85, 1947;
14. Պարենագո Պ. Պ.—Զեկուցում աստղաբաշխական խորհրդակցությունում, Մոսկվա, 1947,
15. Ռուսակավ Գ. Ի.—Դիսերտացիա, Լենինգրադ, 1947.